# ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ ՌՈԲԵՐՏ ՂՈՒԿԱՍՅԱՆԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱՆՔԸ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

28.05.2024



**Հարգելի՛ հայրենակիցներ**

Շնորհավորում եմ բոլորիս Հայաստանի Առաջին Հանրապետության հիմնադրման 106-ամյակի կապակցությամբ:

Հանրապետության տոնը սեփական պետութուն ունենալու մեր իրավունքի վերահաստատման խորհրդանիշն է. այն մեր ազգային միասնության և անկախության արժեքի հանդեպ հավատարմության, հայ ժողովրդի ոգու և բացառիկ ուժի ցուցադրման, անընկճելիության խորհրդանիշն է:

Առաջին Հանրապետությունը նվաճեցինք 1918-ին՝ Մայիսյան հերոսամարտերի՝ Սարդարապատի, Բաշ-Ապարանի, Ղարաքիլիսայի ճակատապարտերում մեր գոյապայքարի արդյունքում:

Այսօր հիշում ենք մեր անկախության համար պայքարողների քաջությունն ու նվիրումը և նաև գիտակցում պետականություն կառուցելու ճանապարհին բոլորիս ջանքերի մեկտեղման ու ամրապնդման կարևորությունը:

Հավե՛րժ փառք մեր հայրենիքի փրկության և ինքնիշխանության վերականգնման համար զոհված հայորդիներին:

Թ՛ող այսօրվա խորհուրդն ու նշանակությունը մեզ առաջնորդի ազգային նպատակներին հասնելու մեր գործում, որը մեր երեխաներին ու թոռներին ամուր և ազատ երկիր ժառանգելու նպատակի համար է:

Մաղթում եմ բոլորիդ խաղաղություն, առողջություն, բարեկեցություն, և թո՛ղ մեր օջախներում տիրի լույսը, բարությունը, առաջընթացը:

Կեցցե՛ Հայաստանի անկախ Հանրապետությունը, որ ունենք այսօր և որը պահպանելու ու մեր զավակներին փոխանցելու պատասխանատվությունը կրում ենք բոլորս: